Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

2.2.16 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտատպանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

2.2.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

2.2.18 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

2.2.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Բանկի առևտրային գործունեությունը:

2.2.20 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն

օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 31):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես առևտրային, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Ածանցյալ գործիքներ

Ակտիվ շուկայում չհաշվառվող ֆինանսական ածանցյալ գործիքների իրական արժեքները սահմանվում են գնահատման մեթոդների կիրառմամբ: Ածանցյալ գործիքների գնահատումը ներառվում է մեկ արժութային տոկոսադրույքի սվոփի, բազմարժութային տոկոսադրույքի սվոփի գործարքներում և փոխարժեքի ֆորվարդային պայմանագրերում: Այս գործարքների իրական արժեքը սահմանվում է որպես հաստատուն դեբիտորական պարտքերի և լողացող պարտավորության ներկա արժեքների միջև տարբերություն կամ հակառակը: Եթե գնահատման մեթոդները կիրառվում են իրական արժեքը սահմանելու համար, դրանք հաստատվում կամ պարբերաբար վերլուծության են ենթարկվում որակավորված մասնագետների կողմից՝ անկախ առաջացման պայմաններից: Այնքանով, որքանով գործնականում հնարավոր է, մոդելները կիրառում են միայն դիտարկելի տվյալները, այնուամենայնիվ, այնպիսի ոլորտներում, ինչպիսին պարտքային ռիսկն է (ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ պայմանագրային գործընկերոջ), փոփոխականությունները և կոռելյացիաները պահանջում են Ղեկավարության գնահատականը: Այս ապագա դրամական միջոցներից ցանկացածի գերազնահատումը և թերագնահատումը կարող է պահանջել այս ածանցյալների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 30):

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները: Տես՝ ծանոթագրություն 19:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ ծանոթագրություն 29:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

**Ծանոթագրություն 3 Ջուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ**

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Տոկոսային եկամուտ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	87,687	166,865	284,615
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից	6,433,896	4,068,573	8,232,896
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	1,277,547	729,780	1,930,002
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	253,195	224,795	318,306
Այլ տոկոսային եկամուտ	35,108	10,292	31,634
Ընդամենը	8,087,433	5,200,305	10,797,453

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	1,696,317	1,532,258	3,145,117

Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	2,492,830	1,136,542	2,257,615
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	146,440	133,385	268,931
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	54,412	49,059	53,251
Այլ տոկոսային ծախսեր	55,727	20,821	20,821
Ընդամենը	4,445,726	2,872,065	5,745,735

Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	3,641,707	2,328,240	5,051,718
--	------------------	------------------	------------------

Ծանոթագրություն 4 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Ղրամարկղային գործառնություններից	48,933	33,125	82,506
Հաշվարկային ծառայություններից	309,261.00	248,394	526,284
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնություններից	3,107.00	2,371	3,383
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	69,980.00	43,928	97,006
Վճարային քարտերի սպասարկումից	201,638.00	154,460	340,649
Լոնբարդային վարկերի տրամադրումից եկամուտ	-	-	-
Այլ կոմիսիոն վճարներ	-	-	-
Ընդամենը	632,919	482,278	1,049,828

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	49,419	7,526	16,738
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	189,267	213,163	456,261
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	5,938	17,189	31,796
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	8,698	333	2,276
Այլ կոմիսիոն վճարներ	23,793	24,047	51,863
Ընդամենը	277,115	262,258	558,934

Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	355,804	220,020	490,894
--	----------------	----------------	----------------

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Եկամուտ շահաբաժիններից	-	-	-
Ընդամենը	-	-	-

Ծանոթագրություն 5 Զուտ եկամուտ առևտրային

գործառնություններից

Առևտրային նպատակով պահվող ներդրումներից

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում բաժնետոմսերից պարտքային արժեթղթերից ածանցյալներից	-	-	-
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	-	51,031	205,090
Ընդամենը	-	51,031	205,090

Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում բաժնետոմսերից պարտքային արժեթղթերից	(580,035)	(56,899)	(458,461)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	890,132	80,896	767,753
Ընդամենը	310,097	23,997	309,292

Արտարժույթային գործառնություններից

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	404,469	314,391	696,995
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	13,014	(63,997)	(249,015)
Ընդամենը	417,483	250,394	447,980

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներից և հուշադրամներից

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	26,963	9,213	41,490
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(37,581)	12,705	6,085
Ընդամենը	(10,618)	21,918	47,575

Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	716,962	347,340	1,009,937
---	----------------	----------------	------------------

Ծանոթագրություն 6 «Այլ գործառնական եկամուտներ»

Այլ գործառնական եկամուտ

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	349,932	212,207	452,513
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	-	-

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	(56,858)	(4,580)	(4,354)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-	-
Արտասովոր եկամուտներ (առկայության դեպքում)	-	-	-
Այլ եկամուտներ	67,678	19,357	30,690
Ընդամենը	360,752	226,984	478,849

Ծանոթագրություն 7 «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ»

Բանկերի նկատմամբ պահանջների գծով	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Սկզբնական մնացորդ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Սկզբնական մնացորդ	-	-	24,488
Պահուստին կատարված մասնահանումներ	87,763	32,926	161,853
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(70,301)	(26,158)	(172,890)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	17,462	6,768	(11,037)
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	(31,256)	199
Պահուստի օգտագործում	(17,462)	-	-
Վերջնական մնացորդ	-	(24,488)	13,650

Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Սկզբնական մնացորդ	2,928,231	1,626,493	1,626,493
Պահուստին կատարված մասնահանումներ	4,301,269	1,877,956	3,890,334
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(3,213,597)	(1,232,607)	(2,617,831)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	1,087,672	645,349	1,272,503
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	(1,338,375)	(851,180)	(1,082,403)

Պահուստի օգտագործում	(109,450)		1,111,638
Վերջնական մնացորդ	2,568,078	1,420,662	2,928,231

Ներդրումների գծով	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Սկզբնական մնացորդ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-

Այլ ակտիվների գծով	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Սկզբնական մնացորդ	35,044	21,426	21,426
Պահուստին կատարված մասնահանումներ	343,923	224,454	927,535
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(367,777)	(235,708)	(923,721)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(23,854)	(11,254)	3,814
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	(2,004)		15,358
Պահուստի օգտագործում			(5,554)
Վերջնական մնացորդ	9,186	10,172	35,044

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Սկզբնական մնացորդ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-

Ընդամենը զուտ մասհանումներ պահուստներին	1,081,280	640,863	1,265,280
--	------------------	----------------	------------------

Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններում և ծանոթագրություններում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների, ինչպես նաև հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ընդհանուր պահուստները չեն ձանաչվել:

Ծանոթագրություն 8 Ընդհանուր վարչական ծախսեր

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	1,545,835	1,124,034	2,293,546
Ծախսեր սոցիալական ապահովության պետական հիմնադրամին հատկացումների գծով	-	-	-
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	795	1,040	1,657
Գործուղման ծախսեր	15,440	16,485	35,827
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	232,662	186,471	369,386
Ապահովագրության գծով ծախսեր	8,015	7,646	16,345
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	106,414	81,147	157,546
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	183,930	139,254	285,130
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	10,681	8,940	48,452
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	61,087	45,088	92,784
Տրանսպորտային ծախսեր	18,578	14,613	30,508
Ծախսեր հարկերի (բացառությամբ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	118,269	77,719	163,959
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	32,176	27,841	53,789
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	2,276	6,255	11,042
Այլ վարչական ծախսեր	32,274	21,957	45,970
Ընդամենը	2,368,432	1,758,490	3,605,941

* 2017թ. երկրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 869 և մեկ աշխատողին բաժնը կազմում է 271.02 հազ.դրամ:

* 2016թ. չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 913 և մեկ աշխատողին բաժնը կազմում է 279.24 հազ.դրամ:

Ծանոթագրություն 9 Այլ գործառնական ծախսեր

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Վճարված տուգանքներ և տույժեր	119	-	43
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	36,283	40,889	70,200
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	51,333	35,251	77,576
Ֆակտորինգի գծով ծախսեր	-	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	352,051	219,352	429,722
Կորուստներ ակտիվների արժեզրկոմից	-	-	-
Արտասովոր ծախսեր	-	-	-
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	139,670	30,209	65,002
Այլ ծախսեր*	112,158	67,387	136,824
Ընդամենը	691,614	393,088	779,367

Ծանոթագրություն 10 Վերահսկվող միավորումներում ներդրումներից զուտ շահույթ/ վնաս

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից	-	-	-
Համատեղ վերահսկվող միավորումներում ներդրումներից	-	-	-
Դուստր բանկերում ներդրումներից	-	-	-
Այլ դուստր ընկերություններում ներդրումներից	-	-	-
Ընդամենը	-	-	-

Ծանոթագրություն 11 Շահութահարկի գծով ծախս

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	141,078	1,793	284,936
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները	-	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս	(15,436)	2,023	6,398
Ընդամենը	125,642	3,816	291,334

	01.01.2017- 30.06.2017	Արդյունավետ դրույթաչափ (%)	01.01.2016- 31.12.2016	Արդյունավետ դրույթաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	933,899	-	1,425,968	-
Շահութահարկ՝ 20% դրույթաչափով	186,780	20	285,194	20
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
Չհարկվող եկամուտներ	-	-	-	-
Չնվազեցվող ծախսեր	(108,467)	-	7,568	-
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում		-	(13,598)	-
Շահութահարկի գծով ծախս	47,329	-	12,170	-
Ընդամենը	125,642	-	291,334	-

	Մնացորդը 31.12.2016թ. դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը 30.06.2017թ. դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	177,437	10,646	-	188,083
Առևտրային նպատակով պահվող արժեթղթերի գծով	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով	-	-	-	-
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Այլ ակտիվների գծով	-	-	-	-
Ստեղծված պահուստների գծով	-	-	-	-
Այլ պարտավորությունների գծով	177,437	10,646	-	188,083
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	328,383	(4,790)	29,327	352,920
Առևտրային արժեթղթերի գծով	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով	267,385	-	29,327	296,712
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Այլ ակտիվների գծով	35,370	(11,454)	-	23,916
Այլ պարտավորությունների գծով	25,628	6,664	-	32,292
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	(150,946)	15,436	(29,327)	(164,837)

Ծանոթագրություն 12 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	808,257	326,327	1,089,476
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	808,257	326,327	1,089,476
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,760,731	1,277,501	1,337,077
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0.46	0.26	0.81

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող համապարփակ ֆինանսական արդյունք	01.01.2017- 30.06.2017	01.01.2016- 30.06.2016	01.01.2016- 31.12.2016
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	925,566	723,550	2,159,017
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	925,566	723,550	2,159,017
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,760,731	1,277,501	1,337,077
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող համապարփակ ֆինանսական արդյունք	0.53	0.57	1.61

Ծանոթագրություն 13

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	30.06.2017	31.12.2016
Կանխիկ դրամական միջոցներ	8,800,869	9,486,724
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	1,340,650	1,688,349
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	18,950,381	37,035,863
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-
Դեպոզիտային միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	530,000	510,000
Հաշվեգրված տոկոսներ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվներից և ավանդներից	-	-
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	29,621,900	48,720,936

*30.06.17թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը, որը կազմում է 17 811 785 հազ. ՀՀ դրամ:

**31.12.16թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը, որը կազմում է 18 553 501 հազ. ՀՀ դրամ:

**30.06.17թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 550 000 հազ.ՀՀ դրամ:
 **31.12.16թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 510 000 հազ.ՀՀ դրամ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում

	01.01.2017	30.06.2017	01.01.2016	31.12.2016
Կանխիկ դրամական միջոցներ	9,486,724	8,800,869	7,288,234	9,486,724
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	1,688,349	1,340,650	1,627,828	1,688,349
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	37,035,863	18,950,381	26,015,976	37,035,863
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-	-	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	510,000	550,000	320,000	510,000
Թղթակցային հաշիվներ ՀՀ բանկերում	58	58	62	58
Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում	2,903,128	540,190	4,239,337	2,903,128
Ընդամենը	51,624,122	30,182,148	39,491,437	51,624,122

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ

	30.06.2017	31.12.2016
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	-	-
Հուշադրամներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 14 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	30.06.2017	31.12.2016
ՀՀ բանկերում	58	58
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում	118,323	2,547,878
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում	421,867	355,250
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	540,248	2,903,186
Միջբանկային վարկեր և ավանդներ	-	-
ՀՀ ԿԲ-ում՝	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզման) պայմանագրեր	-	-
-այլ	-	-
ՀՀ բանկերում՝	3,806,362	8,912,679
- վարկեր և ավանդներ	3,699,601	3,871,513
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզման) պայմանագրեր	-	5,005,338
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ*	106,761	35,828
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում՝	-	16,357

- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ*	-	16,357
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում՝	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	-	-
Հաշվեգրված տոկոսներ	9,590	12,626
Ընդամենը	3,815,952	8,941,662
Բանկերի նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	-	-
Զուտ պահանջներ բանկերի նկատմամբ	4,356,200	11,844,848

Ֆինանսական կազմակերպություններում վարկեր և ավանդներ, այլ պահանջներ		
ՀՀ ֆինանսական կազմակերպություններում՝	4,147,394	3,902,325
- վարկեր և ավանդներ	1,350,815	1,354,312
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզնման) պայմանագրեր	2,709,351	2,453,566
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	87,228	94,447
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպություններում՝	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	-	-
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող ֆինանսական կազմակերպություններում	1,733,865	756,724
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետզնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
այլ*	1,733,865	756,724
Հաշվեգրված տոկոսներ	6,068	7,768
Զուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,887,327	4,666,817

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	-	(13,650)
Չուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների և բանկերի նկատմամբ նկատմամբ	5,887,327	4,653,167
Չուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների և բանկերի նկատմամբ նկատմամբ	10,243,527	16,498,015

*30.06.17թ. դրությամբ այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ տողում արտացոլվել են բանկումատներով կատարված գործարքների գծով այլ բանկերից ստացվելիք 106 761 հազ.ՀՀ դրամ :

*31.12.16թ. դրությամբ այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ տողում արտացոլվել են բանկումատներով կատարված գործարքների գծով այլ բանկերից ստացվելիք 35 828 հազ.ՀՀ դրամ :

*30.06.17թ. դրությամբ դեպոնացված է Ֆինանսական կազմակերպությունում 129 314 հազ.ՀՀ դրամ (269.1 հազ ԱՄՆ դոլար) գումար Մաստեր քարտ և 189 305 հազ.ՀՀ դրամ (394.0 հազ ԱՄՆ դոլար) գումար Վիզա քարտ համակարգով գործարքներ իրականացնելու համար:

*31.12.16թ. դրությամբ դեպոնացված է Ֆինանսական կազմակերպությունում 130 174 հազ.ՀՀ դրամ (268,99 հազ ԱՄՆ դոլար) գումար Մաստեր քարտ և 190 672 հազ.ՀՀ դրամ (394.0 հազ ԱՄՆ դոլար) գումար Վիզա քարտ համակարգով գործարքներ իրականացնելու համար:

Ծանոթագրություն 16

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ

	30.06.2017	31.12.2016
Վարկեր,այդ թվում՝	88,378,953	81,130,643
ՀՀ Կառավարությանը	-	456,417
տեղական ինքնակառավարման մարմիններին	4,462,224	5,228,201
հիպոթեքային	15,912,244	15,882,944
Օվերդրաֆտ	5,165,346	7,502,968
Վարկային քարտեր	17,154,762	17,846,648
Ֆակտորինգ	40,270	39,295
Ֆինանսական լիզինգ	174,895	89,051
Հետգնման պայմանագրեր	6,284,044	346,342
Ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
Այլ	-	-
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ և ստացվելիք վճարներ	690,437	853,235
Ընդամենը վարկեր	117,888,707	107,808,182
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվածությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(2,568,078)	(2,928,231)
Ընդամենը զուտ վարկեր	115,320,629	104,879,951

30.06.17թ. դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված, ինչպես նաև Բանկի և վերջիններիս հետ համատեղ ծրագրերի միջոցներով տեղաբաշխվել է 45 915 258 հազ. ՀՀ դրամ գումարի 2 203 հատ վարկ:

31.12.16թ. դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներով տեղաբաշխվել է 25 881 914 հազ. ՀՀ դրամ գումարի 2 093 հատ վարկ:

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ

	30.06.2017	31.12.2016
Վարկեր,այդ թվում՝		
Ստանդարտ	114,338,373	101,241,525
Հսկվող	1,365,286	3,632,583
Ոչ ստանդարտ	1,477,088	1,614,904
Կասկածելի	707,960	1,319,170
Անհուսալի*	10,631,681	8,590,396

Ընդամենը վարկեր	117,888,707	107,808,182
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(2,568,078)	(2,928,231)
Ընդամենը զուտ վարկեր	115,320,629	104,879,951

*30.06.2017թ. դրությամբ անհուսալի վարկերի 5.03% կազմում են մինչև 01.01.2005թ. դուրս գրված վարկերը:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային պորտֆելում հաճախորդներին տրամադրված արժեզրկված (չաշխատող) վարկերի և փոխատվությունների կառուցվածքը	30.06.2017		31.12.2016	
	գումարը	քանակը	գումարը	քանակը
Վարկեր և փոխատվություններ, որից	117,888,707	35,204	107,808,182	36,303
արժեզրկված (չաշխատող) վարկեր և փոխատվություններ, այդ թվում՝	3,550,334	763	6,566,657	1,184
ժամկետանց	301,895	608	660,509	964
վերաձևակերպված*	282,574	18	486,856	26
վերաֆինանսավորված*	-	-	-	-
Ընդամենը վարկեր	117,888,707	35,204	107,808,182	36,303
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(2,568,078)	-	(2,928,231)	-
Ընդամենը զուտ վարկեր	115,320,629	35,204	104,879,951	36,303

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների	30.06.2017		31.12.2016	
	գումար	վարկառուների քանակ	գումար	վարկառուների քանակ
Բանկեր	3,699,601	3	8,876,851	6
Ֆինանսական կազմակերպություններ	1,350,815	27	3,807,878	40
Պետական ձեռնարկություններ	4,533,500	20	5,684,618	16
Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝	55,819,414	1,177	49,388,006	1,231
խոշոր ձեռնարկություններ	18,379,897	119	14,469,743	120
փոքր և միջին ձեռնարկություններ*	37,439,517	1,058	34,918,263	1,111
Ֆիզիկական անձինք, այդ թվում՝	48,306,271	32,782	43,188,597	33,748
սպառողական վարկեր	13,033,109	18,855	7,716,917	19,320
հիփոթեքային վարկեր	15,912,244	1,289	15,882,944	1,221
վարկային քարտեր	17,094,959	10,879	17,815,695	11,834
այլ վարկեր	2,265,959	1,759	1,773,041	1,373
Անհատ ձեռնարկատերեր	8,519,186	1,225	8,693,726	1,308
Հաշվեգրված տոկոսներ	705,414	-	873,629	-
Ընդամենը	122,934,201	35,234	120,513,305	36,349
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ	(2,568,078)	-	(2,928,231)	-
Ընդամենը զուտ վարկեր	120,366,123	35,234	117,585,074	36,349

30.06.2017թ. դրությամբ բանկի խոշոր փոխառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 27 067 456 հազ դրամ, որը

կազմել է վարկային և պայմանական պարտավորությունների պորտֆելի 21.63%-ը և նորմատիվային կապիտալի 79.48%-ը:

31.12.2016թ. դրությամբ բանկի խոշոր փոխառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 15 274 279 հազ դրամ, որը կազմել է վարկային և պայմանական պարտավորությունների պորտֆելի 13.3%-ը և նորմատիվային կապիտալի 47.33%-ը:

Տրամադրված վարկերի և փոխառվածությունների վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների	30.06.2017	Տոկոսային հարաբերությունը	31.12.2016	Տոկոսային հարաբերությունը
Արդյունաբերություն	15,424,284	13.16	12,007,548	11.20
Գյուղատնտեսություն	2,491,018	2.13	1,835,352	1.71
Շինարարություն	6,861,268	5.85	2,377,313	2.22
Տրանսպորտ և կապ	4,787,153	4.08	5,116,841	4.77
Առևտուր	21,986,488	18.76	24,592,100	22.96
Սպառողական	30,004,315	25.60	25,528,295	23.96
Հիփոթեքային վարկեր	15,912,244	13.58	15,882,944	14.85
Սպասարկման ոլորտ	6,747,006	5.76	8,650,167	8.11
Այլ	12,984,494	11.08	10,964,387	10.23
Հաշվեգրված տոկոսներ	690,437	-	853,235	-
Ընդամենը	117,888,707	100.00	107,808,182	100.00

Հաճախորդների ռեզիդենտության առումով վարկային պորտֆելի վերլուծությունը	30.06.2017	Տոկոսային հարաբերությունը	31.12.2016	Տոկոսային հարաբերությունը
ՀՀ ռեզիդենտներ	117,129,706	99.94	106,812,374	99.87
Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ*	65,444	0.06	70,362	0.07
ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ*	3,120	0.00	72,211	0.07
Հաշվեգրված տոկոսներ	690,437	-	853,235	-
Ընդամենը	117,888,707	100	107,808,182	100

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության	30.06.2017	31.12.2016
Անշարժ գույք	76,756,641	79,239,357
Շարժական գույք	460,189	367,088
Շրջանառու միջոցներ	255,475	1,217,732
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխիքներ	7,355,293	6,821,369
Թանկարժեք զարդեր, ոսկու ջարդոն	6,531,567	6,315,057
Դրամական հոսքեր	15,787,495	4,090,259
Դրամական միջոցներ	336,159	4,489,058
Արժեթղթեր	10,137,132	4,269,380
Այլ	268,756	998,882
Ընդամենը վարկեր	117,888,707	107,808,182

Ծանոթագրություն 17
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	30.06.2017	31.12.2016
ՀՀ Պետական պարտատոմսեր	20,084,496	31,798,859
- գանձապետական պարտատոմսեր	20,084,496	31,798,859
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում	-	-
- գանձապետական պարտատոմսեր	-	-
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
ԲԲԲ+(Բաա1) և ցածր վարկանիշ ունեցող,ինչպես նաև վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում	-	-
- գանձապետական պարտատոմսեր	-	-
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	20,084,496	31,798,859

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	30.06.2017		31.12.2016	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	700,999	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	700,999	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	2,982,349	85,780	958,668	85,780
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	2,982,349	-	751,538	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	207,130	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	85,780	-	85,780
- այլ	-	-	-	-
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	3,683,348	85,780	958,668	85,780

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	30.06.2017		31.12.2016	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	-	1,342	-	2,715
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	1,342	-	2,715
- այլ	-	-	-	-
Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	1,342	-	2,715

Ընդամենը վաճառքի համար մատչելի արժեթղթեր	23,854,966	32,846,022
---	-------------------	-------------------

Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	23,854,966	32,846,022
---	-------------------	-------------------

Ներդրումներ այլ անձանց բաժնետիրական կապիտալում 30.06.17թ. դրությամբ

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը (հազ. դրամ)	Բաժնեմասը %
«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ	Վճարահաշվարկային ծառայություններ	Հայաստանի Հանրապետություն	30.12.16.թ.	60,715	6.25
«ԱՔՈԱ ՔՐԵԴԻՏ ՈՒՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ	տեղեկատվական ծառայություններ	Հայաստանի Հանրապետություն	30.12.16.թ.	25,065	4.69
«ՍՎԻՖԹ» համակարգ	Վճարահաշվարկային ծառայություններ	Բելգիա	30.12.16.թ.	1,342	0.0
Ընդամենը				87,122	

Ներդրումներ այլ անձանց բաժնետիրական կապիտալում 31.12.16թ. դրությամբ

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը (հազ. դրամ)	Բաժնեմասը %
«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ	Վճարահաշվարկային ծառայություններ	Հայաստանի Հանրապետություն	30.12.16.թ.	60,715	6.25
«ԱՔՈԱ ՔՐԵԴԻՏ ՈՒՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ	տեղեկատվական ծառայություններ	Հայաստանի Հանրապետություն	30.12.16.թ.	25,065	4.69
«ՍՎԻՖԹ» համակարգ	Վճարահաշվարկային ծառայություններ	Բելգիա	30.12.16.թ.	2,715	0.0
Ընդամենը				88,495	

2016թ. և 2017թ. երկրորդ եռամսյակում մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները բացակայում են:

2016թ. և 2017թ. երկրորդ եռամսյակում ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում չեն կատարվել:

Ծանոթագրություն 20 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Շենքեր	Համակ. և կապի միջոցներ	Տնտեսական գույք	Փոխադրա - միջոցներ	Վարձ. գույքի բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	1,732,302	1,698,345	669,969	122,650	201,881	500,962	4,926,109
Սկզբնական մնացորդի ճշգրտում							
Ավելացում	2,454,939	771,297	820,593	197,175	155,997	228,366	4,628,367
Օտարում			(1,497)				(1,497)
Վերադասակարգում	91,885		(32,798)		43,235		
Դուրսգրում		(38,224)	(29,880)				(68,104)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	4,280,120	2,431,418	1,426,387	319,825	401,113	729,328	9,588,191
Մնացորդի ճշգրտում	994	(543)	543	159			1,153
Ավելացում	2,718	97,875	51,281		6,297	5,012	163,183
Օտարում		(145)	(6,457)	(56,584)	(67,848)	-	(131,034)
Վերադասակարգում			90	(181)	(90)		(181.0)
Դուրսգրում		(1,461)	(39,333)	(59,560)	(56,660)		(157,014.0)
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	4,283,832	2,527,144	1,432,511	203,659	282,812	734,340	9,464,298
Կուտակված մաշվածություն							-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	300,042	1,180,739	474,586	68,378	143,452	190,197	2,357,394
Ավելացում	267,541	644,906	611,760	206,346	84,056	162,106	1,976,715
Օտարում		(1,497)					(1,497)
Դուրսգրում		(38,224)	(29,880)				(68,104)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	567,583	1,787,421	1,054,969	274,724	227,508	352,303	4,264,508
Մնացորդի ճշգրտում		(416)					(416)
Ավելացում	59,163	139,451	92,747	12,445	16,734.0	33,160.0	353,700
Օտարում				(56,584.0)			(56,584)
Դուրսգրում		(1,461)	(39,333)	(59,560)	(56,660)		(157,014)
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	626,746	1,924,995	1,108,383	171,025	187,582	385,463	4,404,194
Ջուտ հաշվեկշռային արժեք							
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,657,086	602,149	324,128	32,634	95,230	348,877	5,060,104
Նախորդ ժամանակաշրջանի վերջում	3,712,537	643,997	371,418	45,101	173,605	377,025	5,323,683

Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում	30.06.2017	31.12.2016
Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում	4,711,227	4,946,658
Կապիտալ ներդրումներ բանկի ոչ նյութական ակտիվներում	348,877	377,025
Ընդամենը	5,060,104	5,323,683

2017թ. երկրորդ եռամսյակի ընթացքում շահագործումից դուրս 2 287 հազ.դրամի հիմնական միջոց և ոչ նյութական ակտիվ հանձնվել է շահագործման:

2016թ. չորրորդ եռամսյակի ընթացքում շահագործումից դուրս 64 466 հազ.դրամի հիմնական միջոց և ոչ նյութական ակտիվ հանձնվել է շահագործման:

**Ծանոթագրություն
Վաճառքի համար պահվող ակտիվներ**

	30.06.2017	31.12.2016
Բնագանձված գրավ	1,952,586	2,068,421
Շահագործումից հանված հիմնական միջոցներ	-	-
Ընդամենը	1,952,586	2,068,421

**Ծանոթագրություն 21
Այլ ակտիվներ**

	30.06.2017	31.12.2016
Ստացվելիք շահաբաժիններ	-	-
Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ	410,794	223,440
Հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	9,351	121,647
Դեբիտորական պարտքեր ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների գծով	34,157	87,650
Կանխավճարներ աշխատակիցներին	3,916	1,844
